վիրաւորք ի գայլոց, յարօտս վնասակարս և մահաբերս ճարակեալ, պակասեալք և անընակ ի դալար վայրէ ի սուրբ գրոց վարդապետութենէ, ի հանգըստարար ջրոյ անանուն, ի փարախոյ ժողովարանէ արտաքոյ. և ոչ գոյ քեզ հովիւ, որ կրկին գործեաք հովուէ, ունելով ի ձեռին ցուպ և գաւազան, ցպով ընդ գաղանսն մարտնչել և գաւազանաւ զիսաշինսն ուղղել.» Հայոց Եկեղեցու այն ժամանակուայ թըշուառութեան այս պատկերին աւելի ոյժ տալու համար՝ Երզնկացին յիշում է և այն ողբալի վիճակը, որ Հայոց մարմնական ճոխութիւններն օտարները տարան և Հայ Ժողովրդին գերի վարեցին։ Բայց այս ամէնը մոռաբերելով հանդերձ՝ Երզնկացին բաղդաւոր է ճանաչում Հայոց Եկեղեցին. «Ի մեծն և ի գլխաւորական բարիսն երանելի ես և յոյժ խնդալի, ասում է նա, վասն զի ուղղափառ հաւատոյ լոյս ոչ նուազեցաւ, աղբիւր յստակ աւանդութեանցն քոց աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց, յոսկի անբիծ հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ բանին պղինձ ժանտահոտ և կապար սեւթոյր ոչ գտաւ։ Եւ այս բարերախտութեան պատճառ և օժանդակ է հոչակում՝ նա Ս. Գրիգոր Լուսաւորչին, որ է «գլուխ ամենայն բարեաց և հիմն կենաց յաւիտենականաց։» *

---

* Յովհ. Երզնկացի, Ներբող. Սոփ. Հայկ. Ե.։